ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2023 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի №201-Ա ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի №541-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2022 թվականի ապրիլի 12-ի №07/11.1/2729-2022 գրությամբ ներկայացված՝ Երևան քաղաքի Ռուբինյանց փողոցի №15/5 հասցեում «ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից շահագործվող՝ 893.2-898.2ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում խանգարումներ առաջացնող բջջային կապի վերահաղորդակի վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայություն-ները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի մայիսի 11-ի №201-Ա որոշմամբ Ընկերությանը պարտավորեցրել է դադարեցնել առանց թույլտվության 893.2-898.2ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը,

բ) Նախարարության 2022 թվականի հոկտեմբերի 18-ի №07/11.1/8626-2022 գրությամբ ներկայացված՝ Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի №5 հասցեում Ընկերության կողմից 893.2-898.2ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթից առանց թույլտվության 897.5ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող բջջային կապի վերահաղորդակի վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ Հանձնաժողովը 2022 թվականի դեկտեմբերի 14-ի №541-Ա որոշմամբ՝ դադարեցման կարգադրությունն արձակելուց հետո առանց թույլտվության 897.5ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը շարունակելու համար Ընկերությանը տուգանել է 1 000 000 (մեկ միլիոն) դրամի չափով,

գ) Ընկերությունը 2023 թվականի հունվարի 19-ին Հանձնաժողով է ներկայացրել Հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի №541-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին դիմում-բողոք՝ նշելով, որ Ընկերության և Նախարարության համապատասխան աշխատակիցների համատեղ իրականացրած հետազոտումների արդյունքում հաստատվել է, որ Երևան քաղաքի Ռուբինյանց փողոցի №15/5 և Մաշտոցի պողոտայի №5 հասցեներում հայտնաբերված բջջային կապի վերահաղորդակները պատկանում են «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ), որի աշխատակիցները վերացրել են վերահաղորդակների խափանումները: Միաժամանակ, Ընկերությունը պնդել է, որ տվյալ հասցեներում առկա բջջային կապի վերահաղորդակների շահագործողը չէ, ինչով պայմանավորված՝ խնդրել է անվավեր ճանաչել Հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի №541-Ա որոշումը,

դ) օրենսդրության պահանջներին չհամապատասխանող՝ ճառագայթող ռադիոհե-ռարձակման աղբյուրների հայտնաբերման, տեղորոշման տեղեկատվությունը հավաստող մարմինը Նախարարությունն է, Հանձնաժողովը 2023 թվականի հունվարի 24-ի №ԳԲ/34.2-Մ2-9/188-2023 և մարտի 14-ի №ԳԲ/34.2-Մ2-9/821-2023 գրություններով դիմել է Նախարարություն՝ վերահաղորդակների շահագործման (ներառյալ՝ փաստացի շահագործողի) վերաբերյալ դիրքորոշում, ինչպես նաև Երևան քաղաքի Ռուբինյանց փողոցի №15/5 հասցեում հայտնաբերված և 893.2-898.2ՄՀց ռադիոհաճախականու-թյունների տիրույթում խանգարումներ առաջացնող վերահաղորդակի շահագործման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար, որոնց ի պատասխան՝ Նախարարությունը 2023 թվականի փետրվարի 1-ի №01/11.1/827-2023 և մարտի 22-ի №01/11.1/2911-2023 գրություններով հայտնել է, որ Ընկերության կողմից շահագործվող վերահաղորդակները տեղադրվել են «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից, Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի №5 հասցեում տեղադրված վերահաղորդակի աշխատանքը անմիջապես դադարեցվել է, իսկ Ռուբինյանց փողոցի №15/5 հասցեի մոտակայքում 2023 թվականի հունվարի 30-ին իրականացված հետազոտումների ընթացքում վերահաղորդակի աշխատանք չի արձանագրվել, ընդ որում 2022 թվականի ապրիլի 7-ին Ռուբինյանց փողոցի №15/5 հասցեում հայտնաբերված՝ 893.2-898.2ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում խանգարումներ առաջացնող՝ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի բջջային կապի վերահաղորդակը ճառագայթել է 897.5ՄՀց ռադիոհաճախականությամբ,

ե) Հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 7-ի №ՍՇ/34.2-Մ2-9/364-2023 գրությամբ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ից պահանջվել են պարզաբանումներ՝ խնդրո

առարկա հարցի վերաբերյալ, որի առնչությամբ վերջինս 2023 թվականի փետրվարի 13-ի գրությամբ տեղեկացրել է, որ վերահաղորդակների խափանված աշխատանքի վերաբերյալ ահազանգ ստանալուն պես՝ դրանք անմիջապես փոխարինվել են նոր սարքերով, և չափումների արդյունքները սարքերի փոխարինումից առաջ և հետո չեն հայտնաբերել ինտերֆերենցիայի առկայություն, իսկ Հանձնաժողովը 2022 թվականի դեկտեմբերի 21-ի №550-Ա որոշմամբ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին արդեն իսկ պարտավորեցրել է դադարեցնել առանց թույլտվության 897.5ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը, որի կապակցությամբ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն տեղեկացրել է, որ նշված ռադիոհաճախականության օգտագործումը տեղի է ունեցել խափանված սարքավորման աշխատանքի հետևանքով, որը խնդիրն արձանագրելուց անմիջապես հետո անհապաղ ապամոնտաժվել է,

զ) ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 11-ի №201-Ա և դեկտեմբերի 14-ի №541-Ա որոշումներով նշված ռադիոհաճախականությունները Ընկերության կողմից չեն օգտագործվել (տվյալ ռադիոհաճախականություններով աշխատող վերահաղորդակները վերջինիս կողմից չեն շահագործվել, այլ տեղադրված են եղել «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից), իսկ Հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 21-ի №550-Ա որոշմամբ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի նկատմամբ արդեն իսկ արձակվել է դադարեցման կարգադրություն, ուստի Հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 11-ի №201-Ա և դեկտեմբերի 14-ի №541-Ա որոշումները ենթակա են ուժը կորցրած ճանաչելու, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» 57-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի՝

1) 2022 թվականի մայիսի 11-ի «ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու մասին» №201-Ա որոշումը,

2) 2022 թվականի դեկտեմբերի 14-ի «ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տուգանելու մասին» №541-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի

Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------2023թ.